ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/29

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերություն

Բողոք բերող՝ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության ներկայացուցիչներ՝ Ա. Նիկոլայանի, Հ. Գևորգյանի,

«Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, պոմպերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 16.03.2022թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել թիվ 4 արձանագրությամբ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգի հրավերին չհամապատասպանելու և մերժելու մասին որոշումները,

- դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չաւիաբաժինների մասով առաջին տեղ և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 16.03.2022թ.-ին:

17.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/29 համարի ծածկագիրը:

24.03.2021թ.-ին, 31.03.2022թ.-ին և 08.04.2022թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 31.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2022թ.-ին:

2. «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն 16.03.2022թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու) թղթային եղանակով հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չափաբաժիններում (այսուհետ՝ Գնման առարկաներ): «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնին ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Հայտով առաջարկված ապրանքները համապատասխանում էին (համարժեք էին) Գնման առարկաներին, սակայն գնահատելով Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը այն պատճառաբանությամբ, որ առաջարկված ապրանքները չեն համապատասխանում հրավերով սահմանված

ապրանքների տեխնիկական չափանիշներին: 1-ին և 2-րդ չաափաբաժինների մասով Ընկերության գնային առաջարկը ամենացածրն էր:

17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը թղթային եղանակով հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում: Ընթացակարգի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չա փա բաժին եր ում: Գնման առարկաների տեխնիկական բնութագրերը ներկայացված է ստորև՝ թիվ 1 աղյուսակում:

աղյուսակ թիվ 1

Ապրանքի	
անվանումը	*տեխնիկական բնութագիրը*
ԷՅԿ-12-210-55 պոմպ	*1. ԷՅԿ - 12-210-55 HPO (կամ համարժեք) - Ծ-281մմ, - Լ -1850 մմ - քաշը - առավելագույնը 280 կգ - հզորությունը - 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կկտ/ժ էր էներգիա*
ԷՅԿ-12-160-65 պոմպ	*1. ԷՅԿ - 12-160-65 HPO (կամ համարժեք) - Ծ-281մմ, - Լ-1345 մմ - քաշը - առավելագույնը 220 կգ - հզորությունը - 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 160 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էրէներգիա*

2) 02.03.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը վերագնահատվել է և 2-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ: Անհամապատասխանությունները հստակ չեն նկարագրվել նկարագրվել են վերացական ձևով:

3) Ընկերությունը փորձելով կատարել Պատվիրատուի պահանջը Հայտով 1-ին և 2-րդ չափաբաժինների համար առաջարկված տեխնիկական բնութագրերը փոփոխել է և սահմանված ժամկետում ուղարկել է Պատվիրատուին: Փոփոխված Հայտով առաջարկված ապրանքները համապատասխանում էին (համարժեք էին) հրավերով սահմանված Գնման առարկաներին:

4) 04.03.2022թ-ի թիվ 4 արձանագրությամբ Ընկերության Հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժվել է, այն պատճառաբանությամբ, որ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Ընկերության ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Հրավերով սահմանվածին:

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում

պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ և 43-րդ «41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...) Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:»:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, (...):

43. Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

1) (...): Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը.

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից Ընկերությունը Հայտով առաջարկել է հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժիններին համապատասխանող (համարժեք), որպիսի հանգամանքներում Ընկերությանը ենթակա չէր, սակայն հաշվի չառնելով այդ հանգամանքը Պատվիրատուն մերժել է Ընկերության Հայտը 1-ին և 2-րդ

չափաբաժինների մասով, այդ կերպ նաև սահմանափակելով Ընկերության մասնակցությունը նշյալ գնման ընթացակարգին:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել թիվ 4 արձանագրությամբ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընթացակարգի հրավերին չհամապատասպանելու և մերժելու մասին որոշումները,

- դադարեցնել թիվ 5 արձանագրությամբ «ՎԱԼՄԼ» ՍՊԸ-ին 1-ին և 2-րդ չաւիաբաժինների մասով առաջին տեղ և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Ի լրումն 16.03.2022թ.-ին ներկայացված բողոքի, «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոքի փոփոխություն, որով հայտնել է հետևյալը.

«Հաշվի առնելով, որ բողոքարկված գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի խախտմամբ և այն, որ սույն բողոքի քննությունը իրականացվում է մրցակցային սկզբունքով և կողմն ինքն է տնօրինում իր լիազորությունների ծավալը խնդրում ենք, բողոքի քննությունը իրականացնել սույն բողոքի առարկայի և հիմքերի սահմաններում:

17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու) թղթային եղանակով հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չափաբաժիներում (այսուհետ՝ Գնման առարկաներ): «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնին ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Հայտով առաջարկված ապրանքները համապատասխանում էին (համարժեք էին) Գնման առարկաներին, սակայն գնահատելով Պատվիրատուն մերժել է Ընկերության հայտը այն պատճառաբանությամբ, որ առաջարկված ապրանքները չեն համապատասխանում հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական չափանիշներին:

1) 17.02.2022.-ին «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը թղթային եղանակով հայտարարել է ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցում: Մրցույթի գնման առարկան էր պոմպերի ձեռքբերումը, որոնք խմբավորված էին 2 չտփաբաժիներում: Գնման առարկաների հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերը ներկայացված է ստորև՝ թիվ 1 աղյուսակում:

աղյուսակ թիվ 1

Ապրանքի	
անվանումը	*տեխնիկական բնութագիրը*
ԷՅԿ-12-210-55 պոմպ	*1. ԷՅԿ - 12-210-55 ՀՊՕ (կամ համարժեք)* *- Ծ-281մմ,* *- Լ -1850 մմ* *- քաշը - առավելագույնը 280 կգ* *- հզորությունը - 45 կվտ/ժ* *- փորձարկման ժամանակ արտադրելով 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կկտ/ժ էր էներգիա*
ԷՅԿ-12-160-65 պոմպ	*1. ԷՅԿ - 12-160-65 ՀՊՕ (կամ համարժեք)* *- Ծ-281մմ,* *- Լ-1345 մմ* *- քաշը - առավելագույնը 220 կգ* *- հզորությունը - 45 կվտ/ժ* *- փորձարկման ժամանակ արտադրելով 160 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էրէներգիա*

2) 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը բավարարում են միայն մեկ արտադրողի ապրանքին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ

նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից՝ Պատվիրատուն 1-ին և 2-րդ չափաբաժիններում ներառված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը կազմել է խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը և Կարգի 22-րդ կետը, այն է՝ տեխնիկական բնութագրերը բավարարում են միայն մեկ արտադրողի ապրանքին: Այս հանգամանքից կարող ենք արձանագրել, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է վերոնշյալ նորմերի խախտմամբ:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է պարտավորեցնել «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը ամբողջությամբ հայտարարել չկայացած:

3. <u>«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.03.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4532-2022 գրությամբ դիմել է «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2022թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 28.03.2022թ.-ին թիվ 62 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 17.02.2022թ. հայտարարված «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ԳԲՔԱ-ԼՕ-2022/29 ծածկագրով բողոքի վերաբերյալ ստորև հայտնում ենք մեր դիրքորոշումը.

Պատվիրատուի կողմից պոմպերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում գնահատող հանձնաժողովի կողմից Հավելված 1.1-ի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Ապրանքների տեխնիկական բնութագրերի տարբերությունները՝

Հ/Հ	«Արմավիր» ՋՕԸ-ի կողմից հրավերով սահմանված տեխնիկական բնութագրեր	«Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված տեխնիկական բնութագրեր	«Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից շտկված տեխնիկական բնութագրեր
1	ԷՅԿ – 12-210-55 HPO (կամ համարժեք) - D-281մմ, - L -1850 մմ - քաշը – առավելագույնը 280 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա	ԷՅԿ – 12-210-55 HPO - D-281մմ, - L -1850 մմ - քաշը – 280 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ Արտադրում է 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա	ԷՅԿ – 12-210-55 HPO - D-235մմ, - L -2070 մմ - քաշը – 260 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 210 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա
2	ԷՅԿ – 12-160-65 HPO (կամ համարժեք) - D-281մմ, - L -1345 մմ - քաշը - առավելագույնը 220 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ - փորձարկման ժամանակ արտադրելով 160 մխ/ժ ջուր, ծախսելով 45 կվտ/ժ էլ.էներգիա	ԷՅԿ – 12-160-65 HPK - D-281մմ, - L -1345 մմ - քաշը - 220 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ	ԷՅԿ – 10-160-65 HPO - D-235մմ, - L -1940մմ - քաշը - 235 կգ - հզորությունը – 45 կվտ/ժ

ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագիրը պետք է լինեն օբյեկտիվորեն

հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Պատվիրատուն, ելնելով իր Կազմակերպությանը վերապահված գործառույթներից և անհրաժեշտությունից, հրավերով պահանջել է - D-281մմ, - L -1850 մմ և - D-281մմ, - L -1345 մմ չափորոշիչներով 12 դույմ շարժիչով պոմպեր, իսկ Մասնակիցը առաջարկել է - D-235մմ, - L -2070 մմ և - D-235մմ, - L -1940մմ չափորոշիչներով 10 դույմ շարժիչով պոմպեր, այդ թվում տարբերվում է նաև 2-րդ չափաբաժնի քաշը՝ պահանջվել է առավելագույնը 220 կգ, իսկ Մասնակցի կողմից առաջարկվել է ավելին քան սահմանված է՝ 235կգ:

Ցանկանում ենք նշել նաև, որ Պատվիրատուն - D-281մմ, - L -1850 մմ և - D-281մմ, - L -1345 մմ չափորոշիչները ներառել է տեխնիկական բնութագրի մեջ, որպեսզի հստակ սահմանի պոմպերի 12 դույմ շարժիչ ունենալը, ինչպես նաև տեղեկացնում ենք, որ նման չափորոշիչներով պոմպեր գոյություն ունեն /առկա է հավաստող փաստաթուղթ/, ուստի Պատվիրատուն պարզապես չէր կարող բավարար գնահատել բողոքաբեր ընկերության հայտը:

Ի պատասխան «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթի, որը իբրև թե վկայում է, որ ООО «Промбурвод» արտադրական գործարանը իրենց կողմից արտադրված պոմպերը համարժեք է համարում Պատվիրատուի կողմից հրապարակված տեխնիկական չափորոշիչներով պոմպերին, հայտնում ենք, որ ի տարբերություն ООО «Промбурвод» արտադրական գործարանի «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության գնահատող հանձնաժողովը չի համարում, որ 10դույմ շարժիչով պոմպերը համարժեք են 12 դույմ շարժիչով պոմպերին:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը՝ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ ներկայացված բողոքը անհիմն է և առարկայազուրկ, զերծ փաստական և իրավական հիմքնավորումներից և այդ իսկ հիմքով՝ ենթակա է մերժման:»:

Ի լրումն ներկայացված դիրքորոշման, Պատվիրատուն 30.03.2022թ.-ին թիվ 64 գրությամբ ներկայացված առարկությամբ հայտնել է հետևյալը.

««Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 17.02.2022թ. հայտարարված «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ԳԲՔԱ-ԼՕ-2022/29 ծածկագրով բողոքի վերաբերյալ ստորև հայտնում ենք մեր առարկությունը.

Ըստ էության ԳԲՔԱ-ԼՕ-2022/29 ծածկագրով բողոքի լրացմամբ վիճարկվում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված գնման առարկայի բնութագրերը՝ հրավերի պահանջները, որը համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 2-ին կետի 2-րդ ենթակետի սահմանվում է.

Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Ուստի վերոգրյալով պայմանավորված՝ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը կարծում է, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի լրացումը ամբողջովին անհիմն է և առարկայազուրկ ու ենթակա չէ քննության սույն բողոքի շրջանակներում, այդ իսկ հիմքով՝ այն ենթակա է մերժման:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2022/29 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պոմպերի ձեռքբերման նպատակով 17.02.2022թ.-ին հայտարարվել է «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որը խմբավորված է 2 չափաբաժիններում:

ii. Ընթացակարգն մասնակցելու նպատակով թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ քանի որ գնման գործընթացը կազմակերպվել էր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 2022թ.-ի մարտի 2-ին ժամը, 14:10-ին մասնակիցներն հրավիրվել էին գների նվազեցման շուրջ բանակցությունների 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

iv. Արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցվել է, քանի որ հայտերի վերագնահատման արդյունքում պարզվել է, որ «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 2-րդ չափաբաժնի տեխնիկական

բնութագիրը /Հավելված 1.1/ չի համապատասխանում «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից պահաջնված տեխնիկական չափանիշներին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված 12-160-65 HPK մակնիշի պոմպը համարժեք չէ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշներին:

v. Արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ մասը և 41-րդ կետը, որոշում է կայացվել «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ին տրամադրել 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար:

vi. Հանձնաժողովի 04.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագրեր/ Հավելված 1.1/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որոնք սակայն չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքների տեխնիկական չափանիշներին:

vii. Արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2022թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման ամբողջությամբ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-

ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի ձեռքբերման նպատակով 17.02.2022թ.-ին հայտարարվել է «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի

համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հայտերի մերժման դեպքում գնման ընթացակարգի արձանագրությունը պետք է հստակ պարունակի դրանց հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերության կողմից պոմպերի ձեռքբերման նպատակով 17.02.2022թ.-ին հայտարարված «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետով Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել, քանի որ հայտերի վերագնահատման արդյունքում պարզվել է, որ «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը /Հավելված 1.1/ չի համապատասխանում «Արմավիր» ՋՕԸ-ի կողմից պահաջնված տեխնիկական չափանիշներին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված 12-160-65 HPK մակնիշի պոմպը համարժեք չէ հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական չափանիշներին, ինչով պայմանավորված՝ արձանագրության 2.1-րդ կետով որոշում է կայացվել «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ին տրամադրել 1 աշխատանքային օր ժամկետ անհամապատասխանությունները շտկելու համար: Հանձնաժողովի 04.03.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետով արձանագրվել է, որ «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների նոր տեխնիկական բնութագրեր/ Հավելված 1.1/ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որոնք սակայն չեն համապատասխանում պատվիրատուի կողմից հրավերով սահմանված 1-ին և 2-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքների

տեխնիկական չափանիշներին, ինչով պայմանավորված, արձանագրության 2.1-րդ կետով, Հանձնաժողովը որոշել է «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ Հանձնաժողովը, 02.03.2022թ.-ին նիստի թիվ 3 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնում Ընկերության հայտում արձանագրելով անհամապատասխանություններ և այնուհետև մերժելով վերջինիս հայտը, գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 41-րդ, 42-րդ, Հրավերի 8.8-րդ և 8.9-րդ կետերով սահմանված պահանջները, քանի որ Հրավերի տեխնիկական բնութագրի և «Հիդրոմաշ սերվիս» ՍՊԸ-ի կողմից Հավելված 1.1-ով առաջարկվող բնութագրերի, իսկ այնուհետև շտկված բնութագրերի միջև առկա էին անհամապատասխանություններ:

Միաժամանակ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ 1-ին չափաբաժնում չարձանագրելով անհամապատասխանություն և չկիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.8-րդ կետերը, այն է՝ ծանուցել մասնակցին, առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը, սույն դեպքում, թույլ չի տրվել վերոնշյալ դրույթների խախտում, քանի որ հիշյալ դրույթների իմաստով հայտերը բացվում են և գնահատվում նիստի ընթացքում, որոշակի ժամանակահատվածում, որի շրջանակներում մասնակիցների կողմից կարող են ներկայացվել անհրաժեշտ կամ հավելյալ փաստաթղթեր, ինչը և կատարվել է Ընկերության կողմից: Հատկապես այն դեպքում, երբ Օրենքով, Կարգով և Հրավերով վերը նշված գործողությունների իրականացնելու սահմանափակում նախատեսված չէ, ուստի այս պարագայում Հանձնաժողովը «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի հայտում 1-ին չափաբաժնի մասով չարձանագրելով անհամապատասխանություն, սակայն ներկայացված շտկումից հետո ընդունելով Ընկերության հայտը մերժելու մասին որոշում, գործել է իրավաչափ:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.8-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապա-տասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնի այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժի

ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Անդրադառնալով «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգը՝ Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտման հիմքով չկայացած հայտարարելու մասին «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի բողոքի փոփոխությամբ ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը փաստում է հետևյալը.

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակա-վորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Վերոնշյալ հոդվածի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Տվյալ պարագայում Ընկերության կողմից ներկայացված փոփոխված բողոքի վեճի առարկա է հանդիսանում «ԱՐՄ-ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-22/03» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանված տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը, սակայն գնման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանված եղել 24.02.2022թ.-ը ժամը 13:10-ը, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ փոփոխված բողոքով ներկայացված իրավական ու փաստական հանգամանքներն անհրաժեշտ էր ներկայացնել մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ուստի տվյալ պարագայում, «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ոչ իրավաչափ է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն

ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ անհիմն են, իսկ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ է, որպիսի պայմաններում ներկայացված բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հիդրոմաշ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից 16.03.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/29 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ